Հավելված N 546
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ֆինանսական ենթակառուցվածքների վարչության (այսուհետ՝ Վարչություն) կապիտալի շուկայի բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-32.26-Ղ4-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը.

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի խթանմանն ու զարգացմանը միտված առաջակությունների ներկայացմանն աշխատանքները.

2. ապահովում է կապիտալի շուկայի գրավչության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը.

3. ապահովում է կապիտալի շուկայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակումը և դրանց իրականացումը.

4. ապահովում է ոլորտի կայացմանն ու սահուն զարգացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերհանման և լուծումների առաջադրման աշխատանքների իրականացումը.

5. ապահովում է կապիտալի շուկայի, մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի զարգացման մեխանիզմների ձևավորման, ֆինանսների հասանելիության գործիքակազմի զարգացման աշխատանքների իրականացումը.

6. ապահովում է միջազգային ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների իրականացումը՝ պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ.

7. ապահովում է ոլորտի վերաբերյալ միջազգային գնահատումների ու զեկույցների ուսումնասիրությունների իրականացման աշխատանքներն և դրանց հիման վրա ոլորտը կարգավորող առկա օրենսդրական կարգավորումների բարեփոխման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքները:

Իրավունքները՝

- **պահանջել** համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ և փաստաթղթեր Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հասանելիության և

կապիտալի շուկայի ախտորոշիչ վերլուծությանն ուղղված միջոցառումների իրականացման համար.

- **պահանջել** համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ֆոնդային շուկայի գրավչության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացման, ոլորտը կարգավորող օրենսդրության մշակման, բարելավման և ներդնման վերաբերյալ.

- կազմակերպել քննարկումներ համապատասխան մարմինների և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների և նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների հետ կապիտալի շուկայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման վերաբերյալ.

- կազմակերպել քննարկումներ կապիտալի շուկայի զարգացմանը և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերհանման և լուծումների վերաբերյալ.

- կազմակերպել կապիտալի շուկայի, մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի զարգացման մեխանիզմների ձևավորման վերաբերյալ քննարկումներ,

- **պահանջել** համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ միջազգային ծրագրերի մշակման և իրականացման վերաբերյալ,

Պարտականությունները՝

- հանձնարարել և վերահսկել ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի խթանմանն ու զարգացմանը միտված միջոցառումների մշակման աշխատանքները, պարբերաբար ուսումնասիրել և ստուգել արդյունքները, հետևել դրանց իրականացմանը.
- **ուսումնասիրել կապիտալի շուկայի ոլորտում տիրող իրավիճակի և առկա խնդիրներ վերաբերյալ տեղեկատվությունը, կարծիքները, դիտարկումները և ներկայացնել առաջարկություններ ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավման, զարգացման ուղղությամբ.**
- ուսումնասիրել և վերլուծել կապիտալի շուկայի վերաբերյալ՝ ներառյալ զարգացման միտումները և առկա կարգավորումները, հանրության իրազեկվածության մակարդակը և ներկայացնել առաջարկություններ.
- բացահայտել, վերհանել կապիտալի շուկայի զարգացմանը և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանը խոչընդոտող խնդիրները, ներկայացնել առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ.
- մշակել կապիտալի շուկայի, մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի և ֆինանսների հասանելիության զարգացմանը ուղղված քաղաքականությունը.
- պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ մշակել ոլորտի զարգացմանը ուղղված միջազգային ծրագրեր .
- ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում կապիտալի շուկան կարգավորող այլ գերատեսչությունների կողմից մշակված օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, համագործակցելով պետական և միջազգային կառույցների հետ.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական

աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ ֆինանսավարկային բնագավառներում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ֆինանսների և ռեսուրսների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվաքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: